Հաստատում եմ՝
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ ռեկտոր
պրոֆեսոր Սրբուհի Գևորգյան

ԿԱՐԾԻՔ

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2022 թ. հունիսի 28-ի նիստի

ԱՄԲԻՈՆԻ ՆԻՍՏԻ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ ՆԵՐԿԱ ԷԻՆ. Ամբիոնի վարիչ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Խ. Ստեփանյանը, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արամ Քոսյանը, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտներ Ն. Մինասյանը, Ա. Մարտիրոսյանը, Հ. Գրիգորյանը, Մ. Մարտիրոսյանը, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Հ. Պապոյանը:

ԼՍԵՑԻՆ. Ռաֆիկ Արամի Խաչատրյանի **«Թուրք-հունական հարաբերությունները «դաշնակցային կոնֆլիկտների» համապատկերում (1950-1990-ական թթ.)»** պատմական գիտությունների թեկնածուի հայցման ատենախոսության քննարկումը (գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռ. Հ. Մելքոնյան):

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ. Պատմական գիտությունների դոկտորներ, պրոֆեսորներ Խ. Ստեփանյանը, Ա. Քոսյանը, պատմական գիտությունների թեկնածուներ, դոցենտներ Ն. Մինասյանը, Ա. Մարտիրոսյանը, Հ. Գրիգորյանը:

Քննարկման մասնակիցները համակարծիք էին, որ Ռաֆիկ Խաչատրյանի **«Թուրք-հունական հարաբերությունները «դաշնակցային կոնֆլիկտների» համապատկերում (1950-1990-ական թթ.)»** ատենախոսության թեման արդիական է, ունի գիտական ու գործնական կարևոր նշանակություն:

20-րդ դարի երկրորդ կեսից մինչ օրս Կիպրոսի հիմնախնդրի և Էգեյան թնջուկի լուծման ուղիների փնտրտուքը շարունակում է մնալ Թուրքիայի արտաքին քաղաքականության առանցքային խնդիրը, ինչն էական ազդեցություն է թողնում Թուրքիայի միջազգային և դաշնակցային հեղինակության, համաշխարհային ազդեցիկ դերակատարի վերածվելու վերջինիս հավակնությունների վրա:

Հունաստան-Թուրքիա բարդ հարաբերությունների հիմքում գտնվում են ինչպես պատմական, այնպես էլ ռազմավարական և աշխարհաքաղաքական մի շարք խնդիրներ:

Այս երկու պետությունները 1952 թվականից հանդիսանում են Հյուսիսատլանտյան ռազմական դաշինքի անդամ, սակայն անգամ այս պայմաններում նրանք շարունակում են մնալ հակամարտող կողմեր: Դեռևս 1960-1970-ական թթ., հիմնախնդիրը դուրս եկավ թուրք-հունական հարաբերությունների շրջանակից և վերածվեց միջազգային հարցի՝ իր վրա սևեռելով ինչպես միջազգային առանցքային դերակատարների, այնպես էլ տարածաշրջանային խոշոր տերությունների ուշադրությունը: Այս առումով հույն-թուրքական հարաբերությունների, մասնավորապես Կիպրոսի և Էգեյան հիմնախնդիրների համակողմանի և խորքային վերլուծությունը չափազանց կարևոր է: Ավելին, արդի տարածաշրջանային զարգացումների պայմաններում Հայաստանի Հանրապետության համար ևս կարևոր նշանակություն ունի հակամարտությունների կարգավորմանն ուղղված միջազգային տարբեր կառույցների, այդ թվում ՄԱԿ-ի բազմաբնույթ առաքելությունների իրականացման համալիր վերլուծությունը, առավել ևս Լեռնային Ղարաբաղի չկարգավորված հիմնախնդրի առկայության պարագայում:

Թեկնածուական ատենախոսության թեման արդիական է, քանի որ վերոնշյալ երկու խնդիրները դեռևս չեն գտել իրենց լուծումները, ավելին դրանց շուրջ քաղաքական զարգացումները շարունակվում են: Հարկ է այստեղ առանձնացնել Էգեյան ծովի կղզիների խնդիրը, որը վերջին շրջանում սրվել է և կարող է ինչ-որ փուլում վերածվել զինված բախման կամ պատերազմի: Ըստ էության թեմայի արդիականությունը պայմանավորված է ոչ միայն հույն-թուրքական հարաբերություններով, այլև ԱՄՆ-ի, ԵՄ-ի և ՆԱՏՕ-ի հետ այս երկրների ունեցած հարաբերություններով:

Ատենախոսը սեղմագրում ձևակերպել է կատարված աշխատանքի նպատակն ու խնդիրները, որոնք հիմնականում համապատասխանում են թեմայի վերնագրին: Ատենախոսության կիրառական նշանակությունը կարելի է դիտարկել առաջին հերթին Հունաստան-Թուրքիա հարաբերությունների համայնապատկերում՝ թուրքական դիվանագիտության առանձնահատկություններն ուսումնասիրելու տեսանկյունից: Մյուս կողմից, այն օգտակար է Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության համար՝ կապված Թուրքիայի հետ: Բացի դա, կարելի է զուգահեռներ անցկացնել Կիպրոսի և Արցախյան հիմնախնդիրների միջև, փորձել գտնել համագործակցության ընդհանուր սկզբունքներ և դրանք ծառայեցնել հայկական դիվանագիտությանը:

Ատենախոսության մեջ հեղինակն օգտագործել է հարուստ գրականություն՝ փաստաթղթեր, համացանցային նյութեր, հայ և օտարազգի հեղինակների աշխատություններ:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլխից, եզրակացություններից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից և հավելվածից:

Ներածությունում հեղինակը ներկայացրել է թեմայի ուսումնասիրման կարևորությունը, հետազոտման մեթոդաբանությունը, անդրադարձել է իր կողմից օգտագործված աղբյուրների և գրականության ցանկին:

Ատենախոսության առաջին գլխում՝ «Կիպրոսի խնդրի առաջացումը. Պատմական նախադրյալները և տարածաշրջանային զարգացումները», ներկայացված են հիմնախնդրի առաջացումը, միջազգայնացումը, Հունաստանի, Թուրքիայի, ինչպես նաև Մեծ Բրիտանիայի հետապնդած նպատակները:

Երկրորդ գլխում՝ «Կիպրական խնդրի ծավալումը և դրա ազդեցությունը Թուրքիա-Հունաստան հարաբերությունների վրա 1960-1983 թթ.»՝ նախ ներկայացվում են 1963-1964 թթ. միջհամայնքային բախումները կղզու տարածքում, այդ բախումներին միջամտելու շահագրգիռ պետությունների (Հունաստան, Թուրքիա, ԱՄՆ, ԽՍՀՄ, Մեծ Բրիտանիա) և միջազգային կազմակերպությունների (ՄԱԿ, ՆԱՏՕ, Չմիավորված երկրների շարժում) հետապնդած նպատակները: Այնուհետև հեղինակը ներկայացնում է 1974 թ. հուլիսի 15-ի հեղաշրջումն ու թուրքական ներխուժումը՝ իր ծանր հետևանքներով: Այս գլխի վերջում հեղինակը խոսում է Կիպրոսում Թուրքիայի վարած հակահունական ժողովրդագրական քաղաքականության և այսպես կոչված «Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության» ստեղծման մասին:

Երրորդ գլխում՝ «Էգեյան հիմնահարցի առաջացումը և դրա դերը Թուրքիա-Հունաստան հարաբերություններում», նախ նկարագրվում են Էգեյան հիմնահարցի առաջացումը: Ապա ներկայացվում է Պապանդրեուի և Օզալի վարած արտաքին քաղաքականությունը, որը Հունաստանին և Թուրքիային հասցրեց պատերազմի եզրին: Այս գլխի վերջում ատենախոսը հիմնավորում է Էգեյան ծովի կղզիների նկատմամբ թուրքական պետության ունեցած հավակնությունների սնանկությունը:

Ատենախոսության չորրորդ գլխում՝ «Թուրք-հունական խնդիրները դաշնակցային և ինտեգրացիոն գործընթացների համապատկերում», նախ ներկայացվում է «ատլանտիստական համերաշխության» գործոնը թուրք-հունական հարաբերություններում: Մանրամասնվում են կիպրական խնդիրը լուծելու, հակադիր տեսակետները միմյանց մոտեցնելու ԱՄՆ տեսլականները: Վերջում ատենախոսն անդրադառնում է Թուրքիայի եվրոինտեգրման գործընթացի վրա կիպրական և էգեյան հիմնախնդիրների ազդեցությանը:

Եզրակացությունների բաժնում ամփոփված են ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրահանգումները:

Սեղմագիրը հիմնականում արտացոլում է ատենախոսության բովանդակությունը:

Նիստի մասնակիցները դրական գնահատելով ատենախոսի կատարած ծավալուն և պատասխանատու աշխատանքը՝ միաժամանակ արտահայտեցին մի քանի դիտողություններ և նկատառումներ, որոնց հաշվի առնելը կարող է հետագայում օգտակար լինել աշխատանքի լրամշակման գործում.

1. Ատենախոսության ներածական մասի և սեղմագրի միջև բովանդակային տարբերություն կա, սեղմագրում համակարգված ձևով ներկայացվում է թեմայի արդիականությունը, ատենախոսության ժամանակագրական շրջանակները, ուսումնասիրության տեսամեթոդական հիմքերը, ատենախոսության գիտական նորույթը և կիրառական նշանակությունը, հետազոտության աղբյուրագիտական հիմքը և հիմնահարցի ուսումնասիրվածության աստիճանը, իսկ ատենախոսության մեջ վերոնշյալ կետերի վերաբերյալ համակարգված շարադրանք, ցավոք, չկա:

2. Ատենախոսը աշխատանքի ներածության մեջ (էջ 3) գրում է. «... Կիպրոսի խնդրի ուսումնասիրությունը կարող է ավելի ընդլայնել մեր պատկերացումները Թուրքիայի քաղաքական գործելաոճի, ինչպես նաև այլ, այդ թվում և Արցախի, կոնֆլիկտի հետ զուգահեռներ տեսնելու առումով»: Սակայն շարադրանքում ո՛չ Արցախյան հակամարտության գործում Թուրքիայի քաղաքական գորելաոճի վերլուծություն, ո՛չ էլ առավել ևս Կիպրոսի և Արցախյան հակամարտության իրավաքա-քաղաքական փաստարկների, ընդհանրությունների և տարբերությունների շուրջ որևէ զուգահեռ չի անցկացվում: Մինչդեռ, կարծում ենք, որ ատենախոսը կիպրական հիմնախնդրի օրինակով, աշխատանքի կիրառականության հիմնավորումից ելնելով, համառոտ պետք է ներկայացներ ինքնորոշմանն առնչվող հակամարտություններում ՄԱԿ-ի գործողությունների երկակիությանը և հակասականությանը, քանի որ մի դեպքում ՄԱԿ-ն աջակցում է ինքնորոշման հիմնարար իրավունքի իրացման գործընթացին, իսկ մեկ այլ դեպքում՝ գերապատվություն տալով տարածքային ամբողջականությանը, պատշաճ դիրքորոշում չի ցուցաբերում ինքնորոշման իրավունքի իրացմանը խոչընդոտող, կամ ուժի կիրառման սպառնալիքով առաջնորդվող այս կամ այն երկրի վարքագծին:

3. Ատենախոսի կողմից հստակ հիմնավորված չէ թեմայի ժամանակագրական շրջանակների ընտրությունը: Չի բացատրվում, թէ ինչով է պայմանավորված հատկապես ժամանակագրական վերին սահմանը 1990-ական թվականներն ընտրելու հանգամանքը:

4. Լիարժեք չէ գրականության տեսության վերլուծության սկզբունքը: Ատենախոսի կողմից քննարկված երկու խնդիրների վերաբերյալ գոյություն ունեն հարյուրավոր ուսումնասիրություններ, ուստի աշխատանքն ավելի կշահեր, եթե հեղինակն ամփոփ նշեր այդ խնդիրների վերաբերյալ առկա մոտեցումները և դրանց համայնապատկերում՝ իր կատարած աշխատանքը: Ատենախոսության ներածական մասում հեղինակն օգտագործված աշխատությունները բաժանել է հետևյալ խմբերի՝ խորհրդային հեղինակների աշխատություններ, ռուս հեղինակների աշխատություններ, արևմտյան հեղինակների աշխատություններ, հույն հեղինակների աշխատություններ, թուրք հեղինակների աշխատություններ, հույն և թուրք հեղինակների համատեղ կամ Արևմուտքում աշխատող թուրք հեղինակների աշխատություններ: Առավել ևս այդպիսի բաժանման պարագայում ատենախոսության ներածության՝ հիմնահարցի ուսումնասիրվածության աստիճանի մասում հեղինակի կողմից ցուցաբերած մոտեցումը, ամբիոնի կարծիքով, թերի է: Անհրաժեշտ էր ոչ թե շարադրել օգտագործված աղբյուրների և գրականության ցանկի գլխավորը փաստաթղթերն ու աշխատությունները, այլ ներկայացնել իր կողմից օգտագործված գրականության քննական տեսությունը՝ գնահատելով սկզբնաղբյուրներում, փաստաղթերում, ելույթներում, հարցազրույցներում և մասնագիտական գրականության մեջ առկա իր համար մերժելի կամ ընդունելի տեսակետները: Առավել ևս, որ թուրք հեղինակների գործերում իրադարձությունների և դեպքերի լուսաբանումը հաճախ հեռու են գիտական անաչառությունից և երբեմն միտումնավոր խեղաթյուրվում է իրականությունը: Ավելին, էջ 8-ում հեղինակը գրում էր «թուրքական պատմագրությունը ագրեսիվ քննադատության է ենթարկում Արցախի և արցախահայության ինքնորոշման իրավունքը, սակայն լիովին այլ շեշտադրմամբ է ներկայացնում Կիպրոսում բնակվող թուրքերի «ինքնորոշման» խնդիրը»: Նաև այս տրամաբանության մեջ ատենախոսը պետք է քննական մոտեցում ցուցաբերեր և ներկայացներ թուրքական տեսակետների կանխակալ և ենթակայական բնույթը, որը կատարված չէ:

5. Հաշվի առնելով, որ Սառը պատերազմի ընթացքում հակամարտությունների կարգավորման գործընթացը հիմնականում կախված էր գերտերությունների և տարածաշրջանային դերակատարների քաղաքական դիրքորոշումից, կարծում ենք, հարկ էր առավել մանրամասն ներկայացնել երկբևեռ կառույցի շրջանակներում սառը

պատարեզամյան շրջանի միջազգային հարաբերությունները, ինչպես նաև այդ համատեքստում ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի՝ Կիպրոսի հիմնախնդրի և հույն-թուրքական հարաբերությունների վերաբերյալ տարբեր փուլերում ունեցած դիրքորոշումների փոփոխությունների խորքային պատճառները: Եվ ընդհանրապես թեկնածուական ատենախոսությունն ավելի կշահեր, եթե հեղինակը համակողմանի անդրադառնար քննարկվող ժամանակաշրջանի միջազգային հարաբերություններին և աշխարհաքաղաքական զարգացումներին՝ այդ համատեքստում ներկայացնելով Թուրքիայի արտաքին քաղաքական զարգացումները:

6. Սառը պատերազմի ողջ ժամանակահատվածում, թե՛ երկբևեռ, թե՛ դրանից հետո միաբևեռ աշխարհակարգի պայմաններում միջազգային խաղաղության և անվտանգության, միջէթնիկ և միջազգային հակամարտությունների կարգավորման, մարդասիրական ու խաղաղարար առաքելությունների գործում ՄԱԿ-ն ունեցել է զգալի դերակատարում: Նույնիսկ շահերի սուր ընդհարման և հակամարտության պայմաններում պետությունները հարկադրված էին եղել պայքարել ստեղծված միջազգային կազմակերպությունների ու համաձեյնացված որոշումների շրջանակներում: Բացառություն չեն նաև հույն-թուրքական հարաբերությունների գլխավոր խոչընդոտներից համարվող Կիպրոսի հիմնախնդիրը և Էգեյան խնդիրը:

Այս համատեքստում ամբիոնը գտնում է, որ Կիպրոսի հիմնախնդրի կարգավորման գործում ՄԱԿ-ի դերակատարման ներկայացումը հպանցիկ է և ոչ համակարգված, որն էլ թույլ չի տալիս ամբողջական պատկերացում կազմել հիմնախնդրի կարգավորման գործում ՄԱԿ-ի ունեցած դերակատարման մասին: Օրինակ՝ ատենախոսության 54-55-րդ էջերում հեղինակն անդրադարձել է 1964 թ. մարտի 4-ին ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի կողմից ընդունված 186-րդ բանաձևին, էջ 60-ում՝ Կիպրական խնդրի կարգավորման հարցում 1965 թ. մարտի 26-ին, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի՝ որպես Անվտանգության խորհրդի փաստաթղթի, հրապարակած ՄԱԿ-ի Կիպրոսի հարցով միջնորդ Գալլո Պլազայի զեկույցին, էջ 80-ում՝ կրակի դադարեցման շուրջ ՄԱԿ-ի թիվ 353 բանաձևին: Էջ 179-ում, գրում է, որ Կիպրոսի ԵՄ անդամակցելու շուրջ բանակցությունները ստացել էին նաև ՄԱԿ-ի աջակցությունը (դեռևս 1996 թ. հունիսի 28-ի ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի 1062 բանաձևով ողջունելի էր համարվել):

Մինդեռ, հայտնի է ՄԱԿ-ի հետևողական և շարունակական ջանքերն, ընդ որում գլխավոր քարտուղարների մակարդակով, ուղղված հիմնախնդրի կարգավորմանը, թե՛ 1980-1990-ական թթ, թե՛ դրանից հետո:

Այսպես՝ 1984-1986 թթ. ՄԱԿ-ը Գլխավոր քարտուղար Խավիեր Պերես դը Կուելյարի գլխավորությամբ առաջարկվել է պայմանագրի երեք նախագիծ, 1986թ. մարտին կրկին Պերես դը Կուելյարը կողմերին ներակայացրել է «շրջանակային համաձայնագիրը», ըստ որի նախատեսվում էր կղզում ներդնել դաշնային կառավարման համակարգ՝ հավասար կարգավիճակ ունեցող թուրքական և հունական մասերով: 1993թ. ապրիլին ՄԱԿ Գլխավոր քարտուղար Բուտրոս Ղալին կողմերին առաջարկեց համաձայնագրի նոր նախագիծ, այսպես կոչված «Գաղափարների համախումբ»-ը, կամ «Գաղափարների միասնություն»-ը, որն առաջարկում էր ստեղծել երկհամայնքային, երկզոնային, թույլ կենտրոնացված դաշնային պետություն: 1999թ. դեկտեմբերին ՄԱԿ Գլխավոր քարտուղար Քոֆի Անանի և հատուկ ներակայացուցիչ Ալվարո դե Սոտտոյի հովանու ներքո մեկնարկել էր բանակցությունների նոր փուլ: Ավելին, սկսած 1964 թ. 186 բանաձևից մինչև 2005 թ. 1642 բանաձևը, ՄԱԿ-ի Անվտանգության Խորհուրդը, Գլխավոր Ասամբլեան ընդունել են տասնյակ բանաձևեր Կիպրոսի հիմնախնդրի կարգավորման հարցով, և այս տեսանկյունից կիպրոսյան հակամարտությունը ՄԱԿ-ի ընդունած որոշումների և բանաձևերի քանակությամբ կարող է զիջել միայն մերձավորարևելյան հիմնախնդրին:

Ելնելով վերոնշյալ գործոններից, կարծում ենք, անհրաժեշտ էր մեկ ենթագլխով համապարփակ ներկայացնել Կիպրոսի հիմնախնդրի կարգավորման հարցում, քննարկվող ժամանակշրջանում ՄԱԿ-ի ունեցած դերակատարումը, որդեգրած սկզբունքները, ինչպես նաև դիվանագիտական և միջնորդական ձախողումների խորքային պատճառները:

7. ԷՋ 149-ում ատենախոսն իրավացիորեն փաստում է, որ «1990-ական թթ. Էգեյան հիմնահարցի և ընդհանրապես հույն-թուրքական հարաբերությունների վրա մեծ ազդեցություն էին ձեռք բերել աշխարհաքաղաքական փոփոխությունները: Սառը պատերազմի ավարտից հետո սկսվել էր ակտիվորեն փոփոխվել Հունաստանի և Թուրքիայի միջազգային դերակատարումը: Բացի դա, հույն-թուրքական հարաբերությունների վրա ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի հետ մեկտեղ աստիճանաբար սկսել էր մեծ ազդեցություն ստանալ նաև ԵՄ-ը, որը, հաշվի առնելով Թուրքիայի իրեն անդամակցելու ցանկությունը, ստացել էր հույն-թուրքական հարաբերությունների կարգավորման վրա ազդելու կարևոր լծակներ: Այս պարագայում աշխատանքը ավելի կշահեր, եթե առավել հստակ շարադրվեր, թե ինչ լծակների մասին է խոսքը, ներկայացներ Կիպրոսի հիմնախնդրի հարցում ԵՄ կարևորագույն դերակատար Ֆրանսիայի բացասական դիքորոշման խորքային դրդապատճառները, որը երբեմն դիտարվկել է ԵՄ-Թուրքիա անդամակցության հավանական նախապայման:

8. Ատենախոսության 4-րդ գլխի 1-ին ենթագլխում՝ «Ատլանտիստական համերաշխության գործոնը ԱՄՆ-Հունաստան-Թուրքիա հարաբերություններում 1950-1990-ական թթ.», ներկայացված նյութը հիմնականում կրկնություն է, քանզի մյուս ենթահարցերում դրա մասին ուղղակի կամ անուղղակի խոսվում է: Հարկ էր «ատլանտիստական համերաշխության» գործոնի մասին խոսել աշխատանքի սկզբում և քննարկված խնդիրներն էլ ներկայացնել այդ համատեքստում, ինչն էլ, ըստ էության, ենթադրում է ատենախոսության վերնագիրը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը, քննարկելով Ռաֆիկ Արամի Խաչատրյանի «Թուրք-հունական հարաբերությունները «դաշնակցային կոնֆլիկտների» համապատկերում (1950-1990-ական թթ.)» խորագրով թեկնածուական ատենախոսությունը, գտնում է, որ այն հիմնականում համապատասխանում է թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջներին, ուստի ամբիոնը երաշխավորում է ատենախոսության հրապարակային պաշտպանությունը ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գիտական աստիճաններ շնորհող ՀՀ ԿԳՄՄՆ ԲՈԿ-ի 006 մասնագիտական խորհրդում, իսկ ատենախոսն արժանի է իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի
ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր՝ Խ. Ստեփանյան

Խ. Ստեփանյանի ստորագրությունը հաստատում եմ
ՀՊՄՀ գիտ.քարտուղար, բանասիրական գիտությունների թեկնածու,
դոցենտ՝ Մ. Իսպիրյան

28.06.2022 թ.